

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Պուշկարիոյ համար	12 ժր
Տարեկան վեցումենայ	6 »
Արսասահմանի վեցումենայ	8 »
հաւար սարեկան	15 »
Ասեռեկայի համար	3 սր.
Տարեկան վեցումենայ	1.50 »

Ի տնտեսական տարածման և արտադրության համար 40 ս. իսկ վերջին երեսի համար 20 սանիտ. և երեք երեսի անգամակերու համար 20 Սիզիզ կրկայ :

Վառնայի համար ձեռքի 10 սանիտ

ՇԱՐՄԻ

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ. ԲԱՂԱԲԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ

ԿՐ ՀՐԱՏԱՐԱԳՈՒԹ ԶՈՐԵՔՇԱԲԹԻ ԵՒ ՇԱՐՄԻ ՕՐԵՐԸ

Նախկին և զրաւ զրկէ
կոթարդութեան հաս-
ցիկն :

Редакция на вѣстникъ
«Шаржумъ»
Варна

Redaction du journal
«Charjoum»
Varna (Bulgarie)

Արսասահմանի համար
ձեռքի
(20 ՍԱՆԻՏԻՄ)
Պուշկարիոյ համար
ձեռքի

≈ 15 ՍԱՆԻՏԻՄ ≈

Գրութիւնք ևս չեն տրուիր

«ՇԱՐՄԻՄ»-Ի ԲԱԺԱՆՈՐԴ ԳՐՈՒՈՂԸ ԲԱՃԱՆԳԻՆԸ ՊԷՏՔ Ե ԿԱՆՈՒՅ ՎՃՈՐԷ

ՈՒՐԻՇ ԵՐԳ

Բայց մինակ «ապստամբ»-ները չեն որ պատրուակներուն ամէնէն տղեղին և ամէնէն ապուշին կրթնած իրենց գրպանը կը պաշտպանեն յեղափոխութեան յաղորդիւնը գէտ. հայրենիքի փրկութեան գործը առանց ծախքի, առանց փող մը կորսնցնելու, պատրաստ եղող պատասախ մը պէս կու տալ ուղղները գաղափարներու, սկզբունքներու մէկ, որոշ տեսակի մը չեն պատկանիր. անոնք կը ներկայանան զիւրայիտ աշխատանքներուն և նուազալի պէտքստութեան մը ներքեւ :

Չեմ գիտեր իմացած էք երբէք ունի խօսք մը, որ կը լլղղկի իրենց գանձը յեղափոխութեան գործը թափելու տրամադիր երեւցող պուճուաններու բերնին մէջ :

— Տա՛մ, ախպար, ամբողջ ունեցածս տամ, բայց որի՞ տամ, որի՞ վստահիմ. ինձի ցուցուցէք նուազար փաշայի պէս, Մեղքոն խանի պէս մեծ, վստահելի մարդ մը, որ գիտեմ թէ մէկ փարա մը չեն խորհրդ. ան ատեն շաուղչին՞ :

Առաջին ահաբակով, այս առարկութիւնը մարդուս աչքին քիչ մը աւելի բանաւոր կ'երեւայ. ի՞նչ կրնան ըսել. մարդը հասնողին չի վստահիր կոր իր գրամը, գրամ ուղելու համար իրեն ներկայացող մէկ որ և իցէ բոկոտնի մը (իրենք ասանկ կրնան) վստահութիւն չունի. ցուցուցէք աշխարհածանօթ անձ մը. պաշտօնական հանգամանք ունեցող և քանի մը միջին աւուկի, մարդը պիտի տայ :

Սակայն բանաւորութեան երեւոյթ ունեցող այս առարկութիւնը երեսդ ի վեր շարտող արարածին բուն, թագուն նպատակը պարզապէս գրամ չտալ է : Այդ փայլուն փաստին կրթնած ատենը, երանելին գիտէ որ յաւիտեանս յաւիտեանից չայ յեղա-

փոխութեան գլուխը չուսար փաշայի պէս. Մեղքոն խանի պէս մարդոց անցնելիքը չիկայ. համոզուած է որ հայ մտաւորական երիտասարդութեան և բրոյնտարիան անդին չպիտի գտնուին ասանկ գործարով զբաղելու սիրտ ու տրամադրութիւն ունեցող խենդեր : Ունին, այդ գէտն աւարածները ունին իրենց թափանցելու այս եղանակն սրատեսութիւնը : Թուարանական վարկածի մը անողք ու անսխալ ճշտութեամբը կանխապէս հաշուած, զննած, որոնած, գտած են բոլոր այն առարկութիւնները որոնք մարդս կը շուտեցնեն և նոյն իսկ պահ կը մղեն զինքը իրաւացի գտնելու զանոնք :

Ես անձնապէս շատ հանդիպած եմ այս ախպարներուն. և պահ մը նոյն իսկ անկեղծութեան շեշտ մը տեսնել կարծած եմ իրենց գաղափարներուն արտայայտութեանը մէջ : Եղափոխութեան ջերմ, կատաղի, անկեղծ կուսակից ցոյց տուած են ինքզինքնին, և մինչև իսկ հրաշայի ծրագիրներ պարզած են մեծ շարժման յաջողութիւն համար. մանրամասնութեանց վրայ այնքան բանաւորակօրէն ծանրացած են որ մտածած եմ թէ այդ մարդիկը գիշերներ լուսուցած ըլլալու են գործին այդքան խորունկները երթալու համար : Սակայն, երբոր պարզուած ծրագրին եղբակացութիւնը գացած վերջի վերջոյ յանգած է նուազար փաշայի մը կամ Մեղքոն խանի մը, ամէն բան լուսաւորուած է աչքիս առջեւ : Մարդը՝ փարա չտալու համար իր յարուցանելիք փցուն առարկութիւնը գիմացիներ իրաւացի ու անկեղծ կլլեցնելու գիտումով՝ ընդարձակ յառաջաբանի մը ձեռք զարկած էր, առանց անշուշտ յաջողելու :

Միայն թէ ամէնքն ալ ծրագիրներու պատիւը չեն ըներ քեզի. առաջի վայրկեանէն շիւղ շիտակ կը յայտնեն իրենց տրամադրութիւնը, և դուն, նուազարի մը օձիքէն բռնելու և յե-

ղափոխական գարձնելու անկարող, կ'առնես կը քալես, յուսահատած :

Մարդկային յեղափոխութեան պատմութեան մէջ տեսնուած են անշուշտ մեծ, բարձրաստիճան մարդիկ որ՝ յողովրդոց ցաւերուն ցաւակից, բռնութեան թշնամի, անոնց աշատագրութի զեկը ձեռք առած են՝ ամէն բան վրայ տալով, երբեմն նոյն իսկ կեանքերնին :

Եւ սակայն, ստրուկ ազգերու ազատագրութեան պայմաններէն մէկը չէ մեծ, բարձրաստիճան մարդոց միջամտութիւնը կամ առաջնորդութիւնը : Տառապող ազգ մը՝ իր դարաւոր երկունքներէն խոնարհ հերոսներ կը ծընի. անոնք են ահա որ կը վճռեն ազգային փրկագործութիւնը. անոնք շահը կը լլան ստրկացած, ընդարձացած ժողովուրդին անշարժ կարգերուն մէջ ըմբոստացումի, ընդվզումի հրդեհէն արծարծող : Մեր ազգը քիչ պիտի ծնի Արխանաններ, բայց իր գոգէն պիտի ժայթքին, իր տառապանքի գոգէն՝ Իբրէններ և Գնուններ :

Նուազար փաշա մը կամ Մեղքոն խան մը երբէք, ոչ մէկ մասնակ պիտի ուզեն յեղափոխութեան ճամբով մեր ազգին փրկելու ձեռք բերելու աշխատիլ : Գլխաւորութեան ապուշ, անրան միջնորդութիւն մէջ տարիներով որոճացող էակներ տրամաբանօրէն և բնականաբար արդէն չեն կրնար երբէք հաշտուիլ ազատութիւն ձեռք բերելու այս բիրտ, բուռն, ըմբոստ գրութեան հետ :

Ի՞նչպէս ուրեմն կարելի է որ այս տեսակ արարած մը հայ յեղափոխութեան պարագլուխ կանգնի : Այսօրինակ պահանջում մը իւթորի մը չէ՞ իսկապէս :

Ուրեմն մեր այն հարուստ սպաները որ նուազար փաշաներու

կը պլլուին դրամ՝ չտալու համար յեղափոխութեան, առարկութիւններուն ամէնէն ցաւալին և գոռահիկը ընտրած են իբրեւ զէնք : «Ապստամբ» ճիւղներուն քով ի վեր իրենք ալ ուղբալի, ծիծաղելի գիմակաթափներու երեւոյթը ունին այլեւս : Իրենցը այլեւս վիճակած, վարնոց հնարք մըն է. խորհուրդ կուտանք որ այդ տեսակ խաբբայ, անվայել միջոցներ ծալլեն գրպանին դնեն. և իրենց շիկնելու անտրամադիր զէմքերնէն վար առնելով ստութեան գիմակը, դրամ ուղեղու համար իրենց ներկայացող յեղափոխականին անկեղծօրէն, շիւղ շիտակ յայտարարեն :

— Յեղափոխութեան գրամ չեմ իտար, լմնցա՛ւ :

Ու ան ատեն, գիրքերը վիճակները որոշուելով, վճռական բաներու ձեռք կը զարնուի :

Շաւարշ

ԱՆՅՈՐԴԻ ՆՈՒԹԵՐ

Լիւս Անուպուս, 10 օգ ւսնս

Արձեշէ կամ Ականցէ մեկնելով նախ ուղեցի այցելել մեր պատմական Լիւս անապատը, որ հարիւրաւոր անկարող ձեռքը, կոյրեր ու կաղեր կը պատսպարէր իր մէջ ժամանակով :

Երբեմնի այդ թշուառներու և անկարողներու ապստամբարանը իր անցեալին բոլորովին հսկանակ երեւոյթը կը ընծայէ այսօրուան օրս :

Մինչ այցելու կսպասէ որ ան իր վայելի բարեգործական ձեռքերին հաւատարիմ. իր օրինաւոր եկամուտներով, այսպիսի ճգնաժամի մը իր ծոցին մէջ պատսպարած ունենայ մեր անհատնում անտէրուն՝ որբերէն, ապագայ սերունդ մը պատրաստելու համար, այցելու սրտի ճմլումով կը տեսնէ որ այդ պատմական վանքը գժօխ մը դարձած է վանահայր Սահակ եպիսկոպոսի և քանի մը ցած ու սեւոգի վար-

դասակարգում և ձևափոխում:

Մէկ օրը չկայ հոն, վարժարան ըստած բանը գոյութիւն չունի, մինչդեռ բարեսէրներու կողմէ կտակուած կալուածն ր տարին 500 օսկիէ աւելի հասոյթ կը բերեն, առանց հաշտելու վանքին հողային կալուածներուն եկամուտը, որ կրնայ այդպէս մէկ քանի վանքեր մատակարարել լիովին:

Առաջին ակնարկով, երբ ցարենի շտեմարանին գունէն կանցնէի, տեսայ աւելի քան 300 զըրիւ ցորեն թափուած շտեմարանին դրան առջեւ. հետաքրքրուելով հոն գտնուող վերակացու Մեսրոպ վարդապետին հարցուցի թէ ներկայ տարուան հուճքէն էր ատիկա. կ'օնաւորը անամթաքար պատասխանեց թէ անցեալ տարուան բերքն ըլլալուն համար ոչլոտած էր, ուստի դուրս պարպած էին որ մաքրուին ինքզինքնին հայ ժողովուրդին ճգնաւոր ցոյց տուող այդ հայ սոփիաները՝ գլուխնին մէջ մէկ քրդական սեւ քոյու (դառան բուրդէ շինուած կոշտուկայիտ բան մը) դրած, կուրծքերնին բաց, ոտքերնին բոպիկ, ալտոտ ծրտոտ, դարչելի արարածներ, Ափրիկէի անապատներուն խորքերը ապրող զաւրի վայրեններու տպաւորութիւնը կը թաղուն վրադ:

Եւ երբ իրենց հարցնես թէ ինչու առանկ ալտոտ կեանք կը վարեն, ի՞նչու անապատին զարգացմանը չեն աշխատիր, և ինչու վարժարան մը չեն հաստատեր պատասպարելու համար 50 60 ի չափ հայ օրբեր, և այս բաները չընեն զատ կելլան վար կը զարնեն հեռուներէն եկած բոլոր այն օտարազգիները որոնք մեր օրբերը կը կրթեն, անկարներուն կ'օգնեն, և հիւանդներուն դարման կը հասցնեն:

Անփոփոխ ու պատրաստ պատասխաններ ունին տալու անցորդին այս հարցումներուն. «Մենք գիշեր ցորեկ աղօթողներ ենք, աշխարհային սնտի փառքերը օտնակոխ ըրած՝ Աստուծոյ ճանապարհին տուած ենք ինքզինքնին: Ո՛ւր է աստեղ հարստութիւն. հազիւ կրնանք ապրել և հայ լուսաւորչական կրօնը պաշտպանել օտնձգութիւններու գէժ մակէց աւելին մենէ սպասելը յիմարութիւն չէ՞, պարոն: Եւ ասոնցմէ զատ, 15 հատ ալ դպրոցական աշակերտ կը պահենք:» Եւ ասոնց նման ոլորմելի առարկութիւններ:

Ի՛նչ խաբեքայական ծրագիր: Տեսայ ատոնց 15 աշակերտները և խօսեցայ հետերնին: Խեղճերուն փոխանակ բան մը սովորեցնելու, ընդհակառակը քսան տեսակ ծառայութիւններու կը գոր-

ծածեն զանոնք: Անոնք վարդապետներուն փոքրատրեմներ են, զրեթէ ցորենի կալեր ծեծողներ, գեղէ գեղ պոտողներ, և որ ամէնէն պժղալին է ու ահաւի՛ն, անոնք, այդ հէք աշակերտները, այդ սոցուներուն, ճիւղներուն կրքին գոհացում տուող գործիքներ են, և հոն, այդ զաւրի անապատին թափուած միմուրքերն մէջ կը փճանան:

Այցեկոյ

ԻՍ ԱՂՈՐԲՍ

Գիշերային մեկուսեան մեջ ահաւոր, Հսկայ շնանց մայրերն ի վեր ճնարայի, Եւ ձևաւարձ՝ ֆեզի, ո՛վ հայր Երկնաւոր, Կը մեմնջե՛ւ իմ աղօթքս յուսալի:

Վերանայ քոյ տոյ աղօթքը աղիկի, ձեղիքն անցնի ֆոյր անձիւր կրկնի. Ե. քո՛ւյ ցնցե, ո՛վ տե՛, զանիդ վրայ ֆեզ Ըմբոսացոյ իր շիշերով ցաւազին:

Ես և՛ կ'ուղղմ, ո՛վ տարիք զըրաւտ, Դո՛ւրն կոծը այրիներ ուժ, կոյսերուն, Բեզ կ'ուղարկեմ հեծկաւքս անսրտս: Արքացած հայ մանուկներուն զիրգ սիրուն:

Են՛՛ն Հայաստան ան, ունի մ'նդուտ անյասակ, Ար կը քաղաքիս սն՛: ունիներ չը զըրաւտ, Ազգ մը հաւաքն, կիներ, ձերեր Երկնաւոր, Եւ ինչ անկարող, ո՛վ Սասնած:

Թե կը կալիս որ տ'իւնը վագի ղն, Ար չը կասի չախի՛ն ձեռքը քշիւտնցն Գեք տ'եր մեզ ալ կուտի ևս անդ, տ'եր, ո՛վ տեր, Զեկնիկ սերը հայ զեղարկիկն բարեւոյն:

Թող ա՛յ չապրիկ լոկ խոնկերով, աղօթքով Սիրս, կորով տու անոնց, ո՛վ տեր քսերտ, Ար սուր կախն իրենց վիզին խաչից ֆոյ Ընդվրդումի նըգոր ոգուլ փրկարտ:

Բակի՛ հարկ և Լահուսալիսիկն ու Ենկնի՛ն, Ատոր անուկիդ զոներ կ'ոգես յուն անվերք, Արձակի՛ տեր, հրաւանք ֆու վերին Ար գիք մեկնիկ ֆաջի վայել կոտի մեք:

4ԷՏՍ

ԶԱՐԹՆՈՒՄ ԴԱՅԻՃՆԵՐԸ

Անոնք որ մեր ազգային ներկայ հոգեկան վիճակը, ուսումնասիրելու հոգն օտանձնած են, պիտի տեսնեն թէ անիկայ ամէն ատենէ տուելի արծարծուն, խանդավառ եւ գործունէութեան հետամուտ հանգամանք մը կը շերկայացնէ: Ամէն կողմ խանդալի շարժում ու անպատում ոգեւորութիւն տրեքու վրայ է: Հայրենիքի ազատութեան տենչացող մեր հ զիններուն անյղի յոյսերը, որոնք անցեալ արեւոտ փոփոխիչներու ու անդոհական խոչնդումներու միջոցին արեան ծովերու մէջ սուղեցան, հիմակ արագօրէն կը վերն: Ճիւղին սլաղիկ իւր իշխանութիւնը, ու հաւատքը ամրապնդօրէն կը վերակենդանանայ: Կենտրոնացող վերածնունդի ու աւետարտ գարձնումի մաքրագործի ցնցում մը յեղաշրջած ըլլալ կրեւի յուսահատութեան եւ լքումի մասնուած հայութեան բովանդակ էութիւնը: Անտարբեութեան ու մահացուցիչ անշարժութեան արտաւարակ ոգին սեղի կուտայ վրէժ-ինքրութեան, ընվզումի ու զարթնումի մեծ խոյանքին: Անձնուէր ու պարստասկած գործիչներու արամաքութիւններէն եւ սուրբ գործին զրականալու զինակցելու յօտարակամութենէն կը զուլակենք որ սօտաւառ է կենաց ու մահու վճռ: Կրկն մալը. բացարձակ գիտակցութեամբ ժողովուրդը յեղափոխութեան ուժին վստահած՝ անոր անձեռնունի գորչին սակ զինուորակցութեան պիտի սրտօրայ կամուտը ու անսպասան ձեռնարկութեամբ: Աւայդ օրը շատ ուշ չէ. միայն թէ յեղափոխական քարոզչները ու գործիչները զարթնումը թող հրդեհեն աւելի սաստկօրէն ու աւելի մեծ եռանդով:

Ազգային կեանքով զբաղողներուն աչքէն անկարելի է որ վրայ՝ գերազանցապէս շքեղ ու արդաւանդ այս ազգային վերակենդանացումը, զոր պէտք էր ամէն ճամբար հայ անասնման հրճուանքով մը ողջունէր: Բայց արտի անհուն մորմաքով կուտանք խոտափանիլ Եր ազգասիրութեան ու հայրենասիրութեան զլուսկին սակ պահուած փնջերները, անամէջ անշարժութեան ու ստորաքարչ ստիկական պաղատարներով սլըղերգացած ու պատուելիական ճոռամարանութիւններով սնած, ուռճացած գաճաճ նկարագրով էակներ—փրտութեան խելերանքներ—քիտախաչոյց սպասումներէ վերջ պոսիկ խիզախութիւնը կուռնեան իրենց տենջանքներուն յաղուրդ տալու համար խոչնդու կանգնելու նորածին զարթնումին: Միշտ հակայեղափոխական տափակ ու անըմբռնելի սետեթիւններու ու խմբագրականներու առաջնորդ արտիան կոչուակ կը ջանայ զարթնումին դահիճը հանդիսանալ երբ տիրական անամթութեամբ հետեւեալ տողերը կը հրատարակէ: «Ուստի մեր անտարբեութեամբ, լուսնային հաւանութեամբը եւ կամ միշտ իսկ քաջակերութեամբը երբ կենդանի կը պահենք մեր ժողովուրդին մէջ այս կամ սյն ձեւ յեղափոխական գործունէութիւն մը, միթէ մեր ազգին բնաջնջումը մեր ձեռքով մենք պատրաստած չենք ըլլարս:» Առաջին անգամը չէ անշուշտ որ

տափաւորութեանը այս տեսակ անպատկառ ոչնչարանութիւններուն ու արեւելիկ վարդապետութիւններուն հանդիսատես կըլլանք, բայց ուրախ ենք ըսելու որ ա՛յ անոնց ականջ զնոզ չկայ, Բայց եւ այնպէս մեր ազգային — յեղափոխական գործիչներուն անհրաժեշտ նուիրական պարսպանութիւնն է ժողովուրդը զրոյշանելու զօրաւոր ու վերջնական նապէս հողով ինչպէս այդ զարթնումը՝ գահճներուն որովհետեւ, որոնցմէ թուանաւորողներ կրնան գտնուիլ: Մենք չենք ուզեր երկարել: Թախանալին պիտի խնդրենք Պոստոյի մէջ հրատարակուող երկու յեղափոխական ծանօթ թերթերէն, որ փոխանակ իրարու դէմ սուր սրաք արձակելու. լուսաբոյն ու քրքրար գործ մը ըրած կըլլան եթէ երբեքն կոչուակի եւ համանման թերթերու ազատի սպեղ կառահներուն ստալքը անոնէն չեղբացնուող գրութիւններով:

Աստուղ

ԵՐԿՈՒ ԽՕՍԷ

Թարիկ 14 սեպտ.

Վերջին օրերս միայն կարգացի պ. Տեղացու՝ իմ գէժ գրած յօդուածը, որովհետեւ երկար ժամանակ բացակայ էի քաղաքից:

Թէ եւ չեմ ցանկայ պատասխանել, և շարժէ էլ այդպիսի գրութիւնը ու շարժութեան արժանացնել և զբաղվել նրանով, բայց որովհետեւ զրկու այդ ձեւը, — հայհոյել և բռնել, միայն բռնել շարժել, և անկարկներ անել, — սովորական է դարձել մեզանում, ահա այս հանգամանքը ստիպում է մեզ մի երկու խօսք ասել, որով մի անգամ ընդ միշտ փակած կը լինենք մեր բանակաւքը պ. Տեղացու և նման բանակաւքերի հետ:

Իւրաքանչիւր ընթերցող անշուշտ նկատած կը լինի, որ իմ թղթակցութիւնները միշտ էլ լին են եղել կատարած ֆակտերով, և մեր բոլոր ատելքը և դիտողութիւնները հիմնուած են եղել այդ ֆակտերի վրայ, փաստերից է հետեւել իմ կարգաւորութիւնները: Եւ փոխանակ ձգտելու խախտել հիմքը, հերքել առաջ բերւած փաստերը, որ ամենուրեք և համոզիչ միջոցն է կուելու, միմիայն բռնել է շարժումը Պարոններ, փաստերը էլի մնում են փաստեր:

Երկէ վարդապետի վերաբերմամբ ևս էլի նոյն կարծիքէն եւ և հետզհետէ կատարող փաստերը զաւրա են էլ աւելի դրակաւորէն հաստատելու մեր կարծիքը: Բայց այդ մասին մէկ ուրիշ անգամ:

Ես ասել եմ, որ երկէ վարդապետը անդրոյն է, մոլի, եսակամ, անտակա, շատ յափշտակող օպորտունիստ և այլն, այդ սպացուցել ենք մի արթ փաստերով, իսկ այժմ այդ բոլորը նորից առաջ բերելը միանգամայն անելորդ եւք համարում, միայն յանձնարարում ենք այդ բանակաւքը հետաքրքրողներին նորից կարգաւ:

Ես գրել էի, որ ժողովուրդը միշտ էլ վերապահութեամբ է վերաբերում երկէ վարդապետի աւանդներին և դժարանում է հաւատալ. քանի որ մի շարք խոստումներից ոչ մէկն էլ իրականացած չէ անսնում, խոստումները լոկ խոստումներ էլ մնում են, միթէ այդ զեպքում իրաւունքը չունի՞

ժողովուրդը կատարած վերաբերելու: Եւ կատարածը թիւը մեծ է, եթէ չստանք բոլոր ժողովուրդը՝ նրանք կը մնան կատարածը: Մինչև հոգարարական ընտրութիւնը անգլիները ոչ ոք հրապարակով չէր յայտնել այդ միտք-կատարածը, թէ և առաջին խօսակցութեան ժամանակ չատերն են տակ, միայն հոգարարական ընտրութեան ժամանակ, երբ առաջարկեց անգլիները ինքի (չեմ ուզում անուն անել, բայց զիտան այդ) թիւնամուտիւնը, նա հրապարակեց և յայտնեց հրապարակով որ չի հաւատում այդ ժողովներին: Փաստ է, կատարած փաստ, որ յայտնի է թուրքի գրեթէ բոլոր հայերին:

Եւ այժմ Տեղացիներ փոխանակ այդ փաստը հերքելու, և կամ եթէ ընդունում է որ ճիշդ է՝ խոնարհելու պատէ պատ է կոչում, բառերի ետեւից է ընկնում, ճշմունք է հաւատացնել: Ինչ ժողովուրդը սպառնալի կարծիք չունի եղիլ վարդապետի մասին, թէ այդպէս մտածողները ինչ նման մի քանիսն են:

Բայց շատ երկարեց, այսքանն էլ բաւական է:

Նախ քան վերջացնելը, չը մտանայ կրկնել և շեշտել, որ բանակաւոր դէպքում անհրաժեշտ է փաստերով խօսել պէտք է հակառակորդի առջ քերած փաստերը հերքել, թէ չէ՝ ո՛չ մի օրինակ հետեւանք չի կարող ունենալ բանակաւոր, դատարար խօսակցութիւն հայտնաբերել և ակնարկներ լսել այն շնթերցողի համար ոչ մի արժէք չեն ունենար: Պարտիներ, թողեք խօսակցութիւնը, առաջ բերեք փաստեր ձեր ասածները սպառնացելու: Կամ հերքելէ մեր փաստերը, այն ժամանակ պատրաստ ենք ընդունելու: Իսկ եթէ անկարող էք այդ անել, գոնէ քաջութիւն ունենե՛ք խոստովանելու: Եթէ այդ էլ չե՛ք անում, գէթ լռեցե՛ք:

Ե. Կուզեան

ԹՂԹԱՎՅՈՒԹԻՒՆ

Սոփիս 23 սկսց.

Տեղացի հոյիւ արժ. Տ. ովհան քահանայ Մանգակունի աշօր զօրավար կոմս Իկնաթիէֆի ներկայանալով՝ ֆրանսերէն ուղերձ մը արտասանած է, մօտաորայէս հետեւեալ իմաստով.

«Ձեր վսեմութեան բարեբաւտիկ զարտեան առթիւ Ձեզ ամէն կերպ սեւեական երջանկութիւն և երկար կեանք մաղթելով, պատու ունիմ ժողովուրդիս խորին զգացումներուն թարգման լինելու և նորա խնդրուածքը, որ արձագանգն է լուրջ հայոց սրտերուն, ներկայացնելու Ձեր վսեմութեան, աղաչելով որ բարահաճիք զ'անկողն զայն յստակայնութեան գահոյթից:

«Ձեր գլխավորութիւնը, որ թուրք բարբարոս կ'ստալարութեան լուծին տակ հեծեծող քրիստոնեաները Թուսիան կը ճանաչեն իբրեւ աստղ փրկութեան: Մեր նախնիք ալ սոյն զերտողն մխիթարութիւնը կը տակեցին մեզ, որ մեր զժբախտ օրերուն նեցուկն եղած է: Միանգամայն մենք Պուլկարահայերս պեսած ենք մեր օրով այս ալատարար աստղին փայլիլը սոյն մեր նոր հայրենիքի երկնակամարին վրայ: Գաղայն Հայաստանի մեր թշուառեցրալըները, որոնք երկար ատեններէ ի վեր

անլուր տանջանքներու խաղաղիք են դարձած, յուսով կը դարձնեն իրենց աղբրալի նայուածքը գէպի այս փրկութեան աստղը, որ մ'աւելի վսեմութեամբ և բարեբաւտ հոգածութեամբ մեր գժբախտ եզրարց զարմամբ ձեռք բերելով Սան—Սթեֆանայի փառաւոր գաշնագրութեան 16րդ. յօդուածը:

«Հաճեցէք ուրեմն, վսեմափայլ տէր, կրկին հայցել սղորմած գուլթը նորին վեհափառութեան Թուսիոյ կայսեր:

«Մեր նահատակաց ողինները, տառապեալներուն արտասուքը և նեղութեան մէջ հեծեծող կոյսերուն և մանչերուն աղաղակները զայս կը հայցեն Ձեր վսեմափայլ տէրութեանէն:»

«Սուր պատասխան, բարեգութիւն արժեքներ լեցունելով պատմեր է թէ ինք որքան հոգ տարած է ժամանակին՝ հայոց սղորալի վեճակը բարելաւելու, բայց Անգլիոյ տրամադրութիւնը խորտակած է իր բոլոր բարի գիտումները, և որոյ բերմամբ յառաջ եկած թրքական վրէժխնդրութիւնը յանգած է այն սարսափելի կոտորածներուն և անլուր շարժարաններուն որոց ենթարկուեցան և ենթակայ ըլլալ կը շարունակեն հայերն և մակեդոնացիք:»

«Տեսոյ աւելցուցած է յուսադրական խօսքեր և խոստացած է

պատեհ ժամու իր բարեացակամ աղգեցութիւնը ի դորձ գնել Ձարին մօտ, որուն ուղորմած սիրտը չէ գաղթած երբէք հայոց վիճակին կարեկցելէ (»:

Կ'աւսու

ՓՈՔԻ ԹՂԹԱՏԱՐ

Պուրբէշէն գաղթական հայ մը հետեւեալ տղերը կը զրկէ մեզ.

«Կը խնդրուի որ հրատարակեք մեզ՝ ուղեւորական հայերու համար շատ ուրախալի սա լուրը, որ գուցէ ձեզ համար սոյնքան շահեկան չըլլայ: Յոյժ հաւատարմաբար կրկնանք թէ Պ. Պ. Գանսեր—Սրաւիք և Ս. Գոնայր, առաջինը տեղացի ուղեւորներն «Անիվլըստի» ամենամեծ լրագրին գլխաւոր խմբագիրներն, իսկ երկրորդը սյժմ ընդհ. ներկայացուցիչ «Սոսիէթէ Բառիզիէն» անուն մեծ նկարչատան, կը պատրաստեն մօտ ատենին «Սրաբատ» անունով ուղեւորներէն ու հայերէն խառն թերթ մը հրատարակել հոս, որուն աւագ նպատակը պիտի ըլլայ ուղեւորներուն վերածնութեան գործը:

«Այս երկու պարտններուն անվիճելի կարողութիւնն ու աներկմիտ

(») Թղթակցին այս վերջին բացատրութիւնը քիչ մը շատ ջուր կը վերցնէ: Միտքն ելաւ կողմսի հայ վարժարաններուն բարբարոսական փակումը, հրատարակչական ընկերութեան ջնջումը և Արձագանքին իր պատ խափանումը և որ աւելին է, Ռուսիոյ լուր մեղսակցութիւնը Հայաստանի կոտորածներուն գործադրութեանը:

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՎԵՐԱԾԻՆ

ՄԱՍ Բ. 26
ԳՂՈՒՆ Բ.

Հեղինէն շատ անհանդիստ գիշեր մը անցկացրեց. գրիթէ քնել չը կարողացաւ: Ծաղիկեանը մտքից չէր հեռանում, նրա մտքով անցնում էր որ Ծաղիկեանը այլեւս իրեն համար չէ. թէ և այդպէս մտածելու մի որոշ եւ լուրջ պատճառ չունէր:

Վերջապէս լոյսը բացվեց, հողիկան ասնջանքները, կապանները հեռացան նրանից ու նա աշխուժութեամբ ոտքի կանգնեց:

Անկողնից դուրս գալու ն պէս նա սկսեց մտածել թէ ինչ գոյնի զգեստ հագնի, որպէսզի Ծաղիկեանին աւելի հաճելի լինի:

—Ձաւմանալի բան, չչնչաց նա հայելիի առջեւ կանգնելով, մինչև օրս մտքովս երբէք չէր անցել զգեստ ներս Ծաղիկեանի ճաշակին յարմարցնել: Թէ և նրա ճաշակը ինչ լուր յայտնի էր. հաստատուն հաւատք ունէի որ ամէն գոյն գգեստի մէջ էլ, եթէ նրանք ցնցոտիներ լինէին անգամ, հաճելի եւ Ծաղիկեանին. բայց այսօր այդ հաւատքը բացակայում է: Կանացի ինքնախոստանութիւնս կորել է Ծաղիկեանի հանդէպ, որը մի ժամանակ ամբողջովին ինձ էր պատկանում:

«Եւ այս բոլորը ինչու, որովհետեւ ևս նրան չը հետևեցի ժամանակին, անաւով ծնողներս քահանայութեան: Ով ծնողներ, ինչ վիճակի էք մասնում ձեր աղջիկը զատկներին. գուք ձեր անտեղի և ետական պահանջներով խնդրում էք նրանց բնական անկեղծ զգացումները, ստիպում էք նրան սրտով ներքաշ լինել իր սիրածին, իսկ մարմնով ձեր նշանակածին:

Մինչև հեղինէն հայելու առջեւ այդ խորհրդածութիւններն էր անում, միւս կողմից մայրը ընկողմանած բազկաթոռի մէջ զիտում էր աղջկան ամէն մի շարժումը և գէժքի արտայայտութիւնը որ հետզհետէ մըթաղանում էր:

—Հեղինէ, ինչ ևս զգում. առաջին անգամն է որ այդքան երկար ժամանակ քեզ հայելու առջեւ կանգնած եմ տեսնում: Առաջ էլ Ծաղիկեանը միշտ միք տունն էր գալիս, բայց նրան ընդունելու համար այդքան շէր պատրաստուում: Ու զարմանալիս այն է որ զգվելով հանդերձ, գէժքիդ վրա ուրախութեան նշույն անգամ չէ երևում: Մի կէս ժամից պէտք է հանդիպես նրան, որի համար մեր ամբողջ տունը տակն ու վրա անելու պատրաստ ես, և փոխանակ ուրախ լինելու, աւելի արտում ես. ի՞նչպէս բողբոսի այդ հակասութիւնը:

—Սուր, մայրիկ, առաջ չէի պատրաստուում, չէի զգում, որովհետեւ համոզված էի թէ Ծաղիկեանին գրբաւելու կարիքը չը կար, որովհե-

տեւ համոզված էի թէ Ծաղիկեանը սիրում է ինձ այնպէս ինչպէս որ կամ, համոզված էի որ Ծաղիկեանը վստահ է իմ փոխադարձ սիրոյ վրա և ինքզինքը չի զուլի, ինձից չի քուստախի: Բայց այսօր այդ համոզումը չունեմ այլեւս. այն օրից եբբ ևս մի քանի նրան հետեւել զանազան անհիմն պատճառներով, մերժեցի նրա կինը լինել որովհետեւ գուք այդպէս պահանջեցիք, այն օրից իմ մէջ համոզում գոյացաւ որ Ծաղիկեանը ինձից հեռացաւ, կորցրեց իր հաւատը գէպի իմ սէրը և՛ իմ անկեղծութիւնը: Ու ահա այսօր, ես մի անտեղի քնադրական մղումի տակ միջոցներ եմ որոնում կրկին գրաւել Ծաղիկեանին հաւատը և սիրտը: Եւ այս նշանները ինձ համար շատ չարագուշակ են երևում. սիրող կնոջ զժբախտութեան հիմը գրվում է այն օրը, երբ նա առաջին տնգամ պէտք է զգում արտաքինով զիւթել: Կամ ճիշդ թաղել գիւթելու իր սիրած և իրեն սիրող սղամարդին, եւ աշխատում եմ աւելի կողկի երեւալ Ծաղիկեանին, բայց համոզված եմ որ զբանով պէտք է աւելի հեռացնեմ ինձից. համոզված եմ թայց ևս այնպէս աշխատում եմ արտաքինով աւելի զօրեղացվա ազգել նրա վրա:

—Յիմար բան'ը ևս անում, Հեղինէ. Ծաղիկեանը եթէ անկեղծօրէն էր սիրում. քո միջուկը երբէք քեզ բուրբոլին մանալու պատճառ լինել չի կարող:

—Ով գիտէ, մայրիկ. Ծաղիկեանի պէս սղամարդիկ հպարտ են: Նրանք

կարող են և շատ շուտով մոռանալ երբ հիասթափվեն, մոռանալ սոյնպէս որ կարծես երբէք սիրած չը լինեն:

«Է՛, մայրիկ, եղածը եղած է. Կը լինի այն ինչ որ լինելու է: Միայն սրանում հաւատացած եղիր որ եթէ ես Ծաղիկեանին կորցնեմ, աշխարհիս անեղձ ժրպխա կ'ընկնից միւր պէտք է լինեմ. եւ իմ այդ մեծ դժբախտութեան գլխաւոր պատճառը նախ դուք պէտք է լինէք՝ յետոյ ես. թերեւս աւելի ես պէտք է լինեմ, որոհեսեւ կամքի ուժը չունեցայ հետեւելու իմ այն զգացումներին որը իմ մէջ գրել է ինքը նախախտումութիւնը:

«Եթէ իսկապէս զժբախտ մնամ, ես պէտք է անիծեմ ձեզ ևս ինձ:

—Սուս կաց, անզգամ աղջիկ. չե՛ս ամաչում, մօր հետ կարելի է այդ ձեւով խօսել:

—Ինչու չի կարելի, երբ այդ մայրը ինքը ևս գուրթ չի ունենում իր աղջկայ երջանկութիւնը և գժբախտութիւնը որոշելու համար: Ինչու չի կարելի երբ ես կամ ինձ նըման մի ուրիշ աղջիկ բարոյական ուժը չի ունենում խորտակել, ոտքի տակ տալ այն խոշնչոտները որոնք անանցելի խրամատ են բանում իր ևս ընտրելի միջիւ ու յաւիտենապէս բաժանում նրանց, որ ստեղծված են միշտ միասին լինելու համար, միասին ստատպելու, միասին ուրախանալու, միասին աշխարհը վաշխելու համար:

(Շարունակելի)

հաստատակամութիւնը ամէնուն ծա-
նօթ ըլլալով, իսրաէ յաջողութիւն
կը մաղթենք իրենց գովելի այս ձեռ-
նարկի մասին: Արդէն մէկ քանի մե-
ծահարուստ ուսմանահայեր իրենց
նիւթական աջակցութիւնը խոստա-
ցեր են գործին յաջողութեանը հա-
մար:

Հրճուանքով կարճանագրենք այս
գրական լուրը: Գամեր-Արշալիր,
Շարժուելի հիմնադիրներէն մին ու յա-
նի մը տարի առաջ արտասահմանի
ամէնէն ժողովրդային գրողներէն մէ-
կը, երկար ատենէ ի վեր արդէն ծը-
րադրած էր այսօրինակ հրատարակու-
թեան մը զարգացումը: Ռուսմանահա-
յուն ազգային վերագործնումը իր
միտքին ու սիրտին յաճախանքներէն
մէկն էր եղած: Լուրը եթէ սայց է,
ահա վերջապէս իր նպատակին կը
հասնի Արշալիր: Իր խորին հմտու-
թիւնը ուսման լեզուին և ուսմանա-
հայուն ընկերային բարեբուն, իրաշ-
խիք մը կ'ընծայէ ձեռնարկին յա-
ջողութեանը: Արդէն, Գամեր-Արշա-
լիրի մը գոյութիւնը այդ միջավայ-
րին մէջ, հաստատում մըն էր թէ օ-
րին մէկը վերջապէս շարժում մը,
յեղաշրջում մը տեղի պիտի ունենար
կորուսելու դատապարտուած այդ
հայկական ընտիր գաղութին մէջ:
Այլասերումի աղիտաւոր հիւանդու-
թեանէն տառապող այդ հայութեան
մէջ Գամերի պէս հրապարագրական
գործիչի մը գոյութիւնը այն ատեն
կ'արդարանար երբ շարժում մը, ազ-
գային զգացումներու հակազդեցու-
թիւն մը առաջ բերէր ան: Ու այս
լուրը մեզ հաղորդող գաղթական հայը
թեթեւ մեղք մը կը գործէ պահ մը
կասկածելով որ անիկա մեզ համար
այնքան շահեկան չպիտի ըլլար: Կե-
րեւայ օակայն թէ սոյն գաղթական-
նը չի գիտեր որ «Շարժում» իր հաս-
տատութեան թուականէն մինչեւ
ցարդ որքան մեծ կարեւորութիւն
տուած է Ռուսմանահայուն ազգային
վերագործնումի կարեւոր հարցին:
Այս նպատակին հասնելու լաւագոյն
միջոցն է անշուշտ լրագրի մը հիմնադ-
րումը, հայ և ուսման լեզուներով,
վասնզի ուսմանահայերուն մեծագոյն
մասն ալ չի հասնիր մայրենի բար-
բառը, որով հասկցած լեզուովը
գրինքը խթելու, հրահրելու, հայաց-
նելու պէտքը կայ: Պիտի վերադառ-
նանք այս կարևոր հարցին:

— Իզմիրէն սեպտ. 16 թուականով
կը գրեն մեզ:

Էնդոյս բանտէն մեզ հասած տե-
ղեկութիւնները սարսափելի են. ան-
տէր մնացած գաղթական հայերը եր-
կար անընդհատ կ'աջտարուին. իսկ
անոնք որ քիչ շատ դիրքի տէր են ու
նիւթականնին տեղն է. քանի մը օսկի
նետեղով շուներուն բերանը առժա-
մապէս կ'արձակուին:

Ժամանակէ մը ի վեր կը լսէինք
թէ երկու ամերիկահայատակ հայեր
խստիւ կը տանջուին. սակայն այս
տարածաշրջանի մենք չէինք
կրնար հաւատալ, վասնզի ամերիկե-
եան հիւպատոսը կը վստահեցնէր մեզ
թէ այդպիսի խստութիւններ չեն
կրնար գործուիլ: Աւա՛ղ, սակայն,
իրողութիւնը այսօր տարբեր բան կը
ցուցունէ մեզ: Վերջերս բանաձեռն
արձակուած բանտարկեալ մը՝ ամերի-
կահայատակ հայերու մասին սա յոյս-
նութիւնը կրնէ մեզ. «Օր մը ամերի-
կահայատակ հայը այնչափ ծեծեցին
որ ինզոք կիսամեռ վիճակի մէջ գե-
րտն ինկաւ. սակայն այդ բարբարոս-

ները խարաղաներով անխնայ կը
հարուածէին բանտարկեալը և կ'ստի-
պէին որ իր ընկերներուն անունը
յայտնէ: Բայց անոր բերնէն բառ մը
կորզելը անհնարին կըլլայ»:

ԱԶԳԱՅԻՆ ԲՐՈՒՆԻԿ

Սեպտ. 29-ին Կիլիկիոյ կաթո-
ղիկոսական ընտրողական ժողովը
գումարուեր է Ատանայի մայր
եկեղեցիին մէջ նախագահու-
թեամբ Մովսէս Եպիս. Կէօմրի. ք-
ճեանի: Կիլիկիոյ աթոռին ընտ-
րելի եպիսկոպոսն ընդհա-
նուր ցանկին մէջ է՝ պատգամա-
ւորնՊրոս ժողովը գաղանի քուէ-
արկութեամբ առաւելագոյն քուէ-
տուեր է հետեւեալ վեց ընտրե-
լիներուն. 1. Տրդատ Եպիս. Պալ-
եան (առաջ. Կեսարիոյ, քուէ 44),
2. Ստեփաննոս արքեպ. Յովա-
կիմեան, (առաջ. Նիկիոսիոյ,
քուէ 42), 3. Բարթոլոմէոս ար-
քեպ. Չամչեան, (քուէ 40), 4.
Ներսէս արքե. Սչուրեան (առ-
աջ. Ռոստոմոյի, քուէ 39),
5. Սահակ Եպիս. Խաչայեան,
(Լուսարարագետ Երուսաղէմի,
քուէ 37), 6. Մովսէս Եպիս. Կէօմ-
րի. քճեան (առաջ. Պիլէճիկի,
քուէ 34):

Այս վեցանուն ցանկին վրայ
ակնարկ մը նետելով՝ մարդ ապ-
շահար կը մնայ: Ենտրուելին ա-
թոռին վրայ պիտի երթայ ու-
րեմն բազմիչ նախկին մատնիչ
Պալեան մը, բազմիք ճի և «սու-
եօճի» Յովակիմեան մը, աշխար-
հածանօթ արիկայ տաճկցած
Չամչեան մը, վանկ վատաբար
խոյս տուող Արալանեան մը, և
վերջապէս Խաչայեանի և Կէօմ-
րի. քճեանի նման թոյլ, անկա-
րող, զառամած մարդիկներ:
Երևակը սա Կիլիկիոյ թեմական
պատգամաւորներուն ընտրական
ճաշակին ըսելիք չկայ: Բայց ա-
մէնը ազէկ՝ սա Չամչեանը ուրիշ
բերեր այս ցանկին մէջ խոթեր
են. հապա Պալեանը, որուն 90
թուականին ըրած մատնութիւն-
ները դեռ չեն մոռցուած: Ի՞նչ
անդամանելի զժբախտութիւն
և Կիլիկիոյ վաղեմի աթոռն հա-
մար ի՞նչ նախատինք, ի՞նչ ան-
ուանարկութիւն երբոր չար սա-
տանան այս երկուքէն մէկը ա-
նի այդ աթոռին վրայ բազմե-
ցունէ: Մտածումն իսկ սարսափ
չա՛ղքեր:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Մ Ս. Կ Ե Պ Ո Ն Ի Ս.

Ապստամբութիւնը երթալով
ընդհանրանալու վրայ է: Ճումա,
Իէթրիչ, Մէհօմիա, Պանսօ,
Նէվրոբուքի, Մէլիիչքօ, Քրէսնա,
Պելասիցա, Բաշլուքա և ուրիշ
բազմաթիւ գիւղեր բողոքովին

ապստամբած են: Բողոք լեռները
լեցուած են գինուած գիւղացի-
ներով: Ապստամբները խումբ
խումբ կը դիմեն դէպի Վարսար:
— Պէթօլիայի մօտ 6 գիւղերու
բողոք երիտասարդները միացեր
են զնդապետ Եան. քօֆի մարդոց:
Ապստամբները կը շարունակեն
կատարել զինուորական վարժու-
թիւններ, ամբողջացնել իրենց
միջնաբեր, զէնքերնուն պակասը
լրացնել թուրքերէն յափշտակ-
ուած զէնքերով և ատեն ատեն
յարձակումներ գործել աւելի կա-
րեւոր կէտերու վրայ:

Միայն Բէթրիչքօյի մօտ 4000
զինուած գիւղացի կը հաշուի:
— Վերջերս սկսած են խումբ
խումբ կիներ և փոքր տղաքներ
փախչիլ Մակեդոնիայէն՝ Պուլկա-
րիս ապստամբելու համար: Գանի
մը օր առաջ կին մը առանց ան-
ցաքրի փախած ատեն ճիշտ սահ-
մանադիւրի վրայ արու զուակ մը
ծներ է:

— Քիւստէնտիլէն առնուած
լուրի մը համաձայն Մակեդոնիա-
յէն հոն հասնող ճամբորդներ կը
պատմեն եղբր թէ ապստամբները
կրակի տուած են Բայանքան:

— Զինուորական յանձնա-
խումբը, որուն մէջ կը գտնուի
նաեւ Էթէմ փաշան, մասնաւոր
կառավարմամբ հասեր է Սեար և
հաստատուեր է հոն: Որոշուեր է
Փոքր Յսիայէն կանչել 30 վաշտ
զօրք Զմիւռնիոյ ճամբով, ձուճա
և Մէլիիք զրկուելու համար:

— Պօլիսէն տրուած լուրի մը
համաձայն՝ թուրք զօրքը Բրուրօ
վայի մօտ ջախջախեր է բազմա-
թիւ պուլկար ասպատակախումբ
մը: Ապստամբներէն 10 հոգի
սպանուեր են:

— 3. 4 օր առաջ Սելանիքէն
և ուրիշ տեղերէն 2350 թուրք
զինուորներ զրկուեր են Տէտէա-
ղաճ. չը գիտցուի բղեր թէ ան-
կէ ո՛ր պիտի երթան:

— Անցեալ օր պուլկար ապս-
տամբները՝ Սէլանիկէն Տէտէա-
ղաճ երկնցող հեռագրական թիւը
9 տեղէն կտրեր են՝ Բօրօյի և
Տէմիր Հիսարի միջեւ:

— Սելանիկէն անգլիական աղ-
բիւրէ բլլած լուրեր կը հաւատ-
տեն թէ մինչեւ հիմա Մակեդո-
նիոյ մէջ 22 գիւղեր ապստամբած
են: Քրէսնայի կիճերն մօտ կէս
վաշտ թուրք զօրք ոչնչացած է:
Երկու տաճկաբնակ գիւղեր այ-
րած են:

— Սօֆիայի մէջ Մակեդոնացի
ուսանողները ժողով գումարելով
յանձնախումբ մը ընտրեր են մա-
կեդոնական երկու կօմիտէները
հաշտեցնելու նպատակով:

— Անգլիական «Քոսմոս» թեր-
թին կարծիքով մակեդոնական
ապստամբութիւնը պիտի մարի
առանց և է հետեւանքի, քանի
որ մեծ պետութիւնները որոշած

են խաղաղութիւնը չը վտանգել
պուլկարական անձնասիրու-
թեան մը գոհացում տալու հա-
մար միայն: Պալքանեան թերա-
կազմին մէջ տեղի ունեցող
խռովութիւնները՝ ամբողջ աշ-
խարհին խաղաղութիւնը վրդու-
վելու չափ կարեւոր չեն եղեր:

— Պէլէճէնա Բօշթաֆի հաշ-
ուով Մակեդոնիոյ մէջ այժմ ա-
մենէն քիչը 10000 զինուած ա-
պստամբներ կը գտնուին: Իսկ
տաճկական ազբուրէ առնուած
տեղեկութիւններու համաձայն
այս պահուս Մակեդոնիա գրո-
ւուող խումբերու թիւն է 22ի
չափ, իսկ ապստամբները հազիւ
500—1000ի կը հասնին:

Պ Ո Ւ Լ Կ Ա Ր Ի Ս.

«Տէյլի Մէյլի» թղթակից
Պ. Վրոն Սօֆիա հասած ըլլալով
նախարարագետ ասօթ. Տանէֆի
հետ տեսակցութիւն մը ունեցեր
է: Նախարարագետը ի մէջ այ-
լոց յայտարարեր է թէ պուլկար
կառավարութիւնը պիտի բաւա-
կանանայ իր սահմանները խզի
մտօք պաշտպանելով: Սակայն
պուլկար կառավարութիւնը կը
չահագրգռուի Մակեդոնացիներ-
ու վիճակով, որովհետեւ իրենց
համարին եղբայրներն են և
կուզեն որ ժամ առաջ գործադ-
րուի Պէրլինի Դաշնագրութեան
23րդ յօդուածը:

Ս Ե Ր Պ Ի Ս.

Պուլկար թերթ մը սերպ լրագ-
րէ մը քաղելով կը հաղորդէ որ
Աղէքսանտր թագաւորը սիրուն
ապտակ մը կերեր է Տրակա թա-
գուհիէն:

Քաղաւորը՝ պետական բողոք
ձայնները նուազեցնելու հարկէն
ստիպուած՝ որոշեր է եղբր որ
այլեւս թագուհիին 2000 ֆր. ամ-
սաթոշակը չվճարուի և այդ է ե-
ղբր պատճառը արքայական կեան-
քէ այս նորարինակ տեսարանին:

ԽՍՏՐՈՆ «ՍՅՆԹՐԱԼ»

Այսօր շաբաթ գիշեր ժամը
9ին պիտի ներկայացուի՝
ԴՍՍԱԻՌ ԿՈՄՍԻՆ ՈՃՐԱԳՈՐԾ
ԵՂՐԱՅՐԸ
կամ
ԵՐԿԻՌՐԵԱԿ ԿՈՅՐԵՐ
տրամ 6 արար
Ծիծաղաշարժ զաւելտ 1 արար

Վաչը, կիրակի գիշեր, պիտի
ներկայացուի՝
ՍԷՋԱՐ ՊՕՐՃԻՍ.
Թատր. 4 արարուած
Կարսի բանբայօճ
Ժիծաղաշարժ զաւելտ 1 արար

Отговорникъ
Мурадъ-Ераносянъ
Печатница „Ванность“ Варна.